ՆՈՐ-ԴԱՐ

№ 82 ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 11 Մայիսի 1899 Երեքշաբթի, 11 Մայիսի ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 82

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հասով 5 կ.
բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաւին՝ 2 կ., երկրամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Այս ինչից է։

Դիտնականների կարծիքը խաղաղութեան կոնֆերենցիայի մասին։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են.—Ղարսից, Բագուից, Բաղեն-Բաղենից։

Լուրեր Թիւրքիայից։

Նամակ խմբագրութեան։

Թղթակցութիւններ.—Մոսկուա։

Քաղաքական.—Թիւրքիա։ Կրետէ։

Հեռագրներ։

Խաղաղութեան կոնֆերենցիան։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 10 մայիսի 1899 թ.

ԱՅՍ ԻՆՉԻ՞Ց Է

—

Ով որ մեր կեանքին և նրա մէջ յայտնուող երևոյթներին հետևել է, նա, գուցէ զարմանքով, զիտած կըլինի, որ զանազան դասակարգի պատկանող մարդիկ իրենց վարմունքով, իրենց ձըգտումներով, այլ և յատկութիւններով, միմեանցից տարբերւում են և այդ տարբերութիւնն ամեն դասակարգին միայն յատուկ լինի անկախ բոլորովին որոշ անձնական յատկութիւններից։

Այնպէս որ անձը մէկ կողմը ձգելով կարելի է համարձակ ասանուանել, որոշ դասակարգին միայն յատուկ և նրա մէջ յայտնուող լծերութիւնները, շատ ան դամ և անհամակրելի գծեր։

Դասակարգը և նրա զբաղմունքըն այդ դասակարգին պատկանող մարդկանց մէջ ժշակում է որոշ առաքինութիւնները կամ արատներ։

Այսպէս՝ հասկանալի է, որ վիճուորական դասակարգի մէջ մշակւում են հերոսութիւնը, անձնուիրութիւնը, այլև ասպետական ազնիւ զգացումները և ձգտումները, ինչպէս և պարապութիւնն ու զուարճասիրութիւնը։ Այն ինչ՝ վաճառական դասակարգի մէջ գործունէութիւնը, տոկունութիւնը, խորամանկութիւնը, այլ և չհասիրութիւնը և ուրիշ արատներ են զարգանում։

Այս ինչից է, որ հայ ուսուցիչը բիչ ռոճիկով բաւական է, հայ գրականութիւնը սիրող, մտմտալին նուիրուած, ընտանիքով ծանրաբեռնուած ժամանակն իսկ շատ նեղութիւններ կրելով էանում և իր լոսքն աշխատում է կատարել ու իր պարտքը վճարել, և այն՝ ճշտութեամբ։

Այս ինչից է, որ նոյն հայ ուսուցիչը հէնց որ քահանայ է դառնում, ամբողջ աշխարհն էլ որ կուլ տայ՝ քաղցած է, ամենքին նեղացնում, անդադար ինտրիգներ է սարքում, ամենալաւ, ապահով դիրքն էլ նրան չէ գոհացնում, և տուած խօսքը, նրա համար պին չունի, իսկ պարտքը վճարելն իրեն համար պարծանք է համարում։

Հա, սա ինչից է... մենք անձերի մասին չենք խօսում, այլ պատակարգի բնոյթն ենք որոշում։

Սա ինչից է, որ նոյն հայը երբ մի որ և է բանկի մէջ ծառայող է կամ հաշուապահ, խիստ պարտաճանաչ է, իսկ երբ հայոց եկեղեցու է լինում, այն ժամանակ ոչ թէ իւր պարտքն է մոռանում, այլ և տալիք հաշիւը։

Սա ինչից է, երբ հայը գործակատար է, բիչ ռոճիկով չարքաշ կեանք է վարում նա, համ սիրում է զրականութիւնը, բարի գործերը, համ ազնիւ ձգտումներ ունի, համ նուիրուած է հայ մտմտալին, համ էլ իւր չնչին ռոճիկից մաս է հանում հայ զրականութեան, սատնում է հայ պարբերական հրատարակութիւնները, համ էլ ճշտութեամբ վճարում է։

Սա ինչից է, որ գործակատարը վաճառական դառնալով՝ նրա մէջ մեռնում է ամեն ազնիւ ձգտումն, ծաղրում է և՝ զրականութիւն, և՝ մտմտալ, «վուլ գեաթը փինդիը ափար» ասելով նայում է որ զրկէ, զրկէ, և միշտ զրկէ՝ ոմի որ կարող է։

Սա ինչից է, որ քանի հայ ուսուցիչը բիչ ռոճիկով է սատնում, սատնում է հայոց թերթ և վճարում է, իսկ երբ ռոճիկը հարիւրներից անցնում է հազարների, նա ոչ թէ թերթ չի սատնում, այլ աշխատում է ուրիշներից վերցնել և կարդալ ու տեղն ընկած տեղը հայհոյում, վատաբանում է հայոց մտմտալը և աշխատում վնասել նրան։

Սա ինչից է, որ քանի հայը պրետենզիա չունի մեծ ինտելիգենտ լինելու, այլապէս՝ բարձր ու արդիւնաւոր պաշտօնների չէ տիրացել, հայ եկեղեցու, հայ գրականութեան, հայ մտմտալի բարեկամ է և սրտացաւ ու անկեղծութեամբ նրանց բարգաւաճման ոչ միայն ցանկացնող, այլ և իւրովանն նպաստող է, բայց հէնց որ իրեն արդէն ինտելիգենտ է համարում, փորը կուշտ է, նա ամեն բանի վրայ վերևից ներքև է նայում և արհամարհում է իւր լեզուն, հետևաբար հայոց մտմտալը, թէպէտև այն ինտելիգենտի ուղեղը նեղ նաև պէս մրզելու լինես, որ և է խմբագրատան վերջին աշխատակցի խելքին և հասկացողութեան չի հասնիլ։

Սա ինչից է... կարող էինք շարունակել, բայց մենք միայն հարցնելով երևոյթներին ենք մատնացոյց լինելու, իսկ դրանց բացատրութիւնը թողնում ենք, որ մեր ընթերցողներն իրենք տան։

ԴԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Հետաքրքրական է իմանալ, թէ զանազան գիտնականները ինչ կարծիք ունեն խաղաղութեան կոնֆերենցիայի մասին։ Հայդելբերգի փիլիսոփայ Կունո Ֆիշերն այդ մասին կարծիք հաւաքողներից մէկին, «Ռուսսկ. Վեդ.»ի ասելով, պատասխանել է հետևեալը. «Աստուածբանական երեք առաքինութիւններից—հաւատ յոյս և սէր—առաջին երկուսը խաղաղութեան կոնֆերենցիայի վերաբերմամբ ես չունիմ։ Աչքի անցկացնելով մանակցողների, 24 պետութիւնների պատգամաւորների լրագրներում հրատարակուած երկար ցուցակը, պատուաւոր նախագահուհի Նիդերլանդի նորաստի թագուհուց սկսած, որի կուսական մաքրութիւնն այնքան զգոյշ ներդաշնակում է խաղաղութեան կոնֆերենցիայի իդէային, մինչև Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա Ռիզա-խանը,—մենք երկիւղով հարցնում ենք մեզ. դրանցից շատերն են արդեօք եկել՝ իրենց սրտում ունենալով զէթ սէր զէպի կուլտուրան և անկոյծ ցանկութիւն ազգերին իրար մօտեցնելուն աշակցելու։ Այդ դիւանագէտներից, գիտնականներից, գիներալներից և խորհրդականներից քանիսն են, որ զօրանոցի նոյն հայեացքն ունին, ինչ որ յայտնեց գերմանական պատգամաւոր Ֆոն-Չտենգելն այնպիսի ցինիքական անկեղծութեամբ։ Չատ բան տեսած և այլևս երազներով չապրող մարդկանց համար դժուար չէ այն ենթադրութեանը գալ, որ ահագին մեծամասնութիւնը կազմուած է նոյն Չտենգելներից»։

Մի ուրիշ գիտնական, Թէոդոր Մոմզէնն ասել է. «Կոնֆերենցիայի վրայ ես նայում եմ, իբրև համաշխարհային պատմութեան մէջ սպրդած մի վրիպակի վրայ»։

Չտրասբուրգի ականաւոր իրաւաբան Լաբանդը խօսում է աւելի հանգամանօրէն և զսպուած կերպով։ Կոնֆերենցիայից անմիջական հետևանքների նա չի սպասում, բացի այն բանից, որ այդ համագումար ժողովին թերևս աջողուի մասամբ մեղմացնել պատերազմների մէջ կատարուող բարբարոսութիւնները և բարելաւել վիրաւորներին խնամելու գործը։ Միջազգային իրաւունքը իւր կողմից շատ քիչ կարող է ազդել ազգերի յարաբերութիւնների վրայ. եթէ ազդերն աւելի խաղաղասէր են դառնում, այդ բանը նրանց զարգացման հետևանքն է, այլ ոչ թէ իրաւագէտների, դիւանագէտների և մարդասէրների դատողութեան հետևանքը։ Պետութիւնների տրնտեսական չահերը, որոնք ամեն տեղ հակառակ են պատերազմական նպատակներին, խաղաղութեան ամենայուսալի յենարանն են կազմում. որքան էլ հին լինի այս միտքը, այնուամենայնիւ պէտք է կրկնել, որ պատերազմը տնտեսական տեսակէտից վնասակար է նոյն իսկ յաղթողի համար ևս։ Ահա թէ ինչ բանի վրայ պէտք է հիմնենք մեր յոյսը։

«Մեր յոյսը պէտք է հիմնենք նաև հասարակաց կարծիքի՝ իբրև մի գործօնի (ֆակտոր) վրայ, որը կարող է վերջ տալ միլիտարիզմին,—աւելացնում է Մարբուրգի միջազգային իրաւանց պրոֆեսոր Վեստերկամպը։—Ես ողջունում եմ Հաագի կոնֆերենցիան իւր այն ազդեցութեան համար, որ ունի մտքերի վրայ,—գրում է այդ գիտնականը,—բայց միևնոյն ժամանակ կարծում եմ, որ այդպիսի համագումար ժողովներն այն ժամանակ միայն զինաթափ անել կըտան կամ կըթեթևացնեն միլիտարիզմի բեռը, երբ ազգերի յոյսը միայն դիւանագէտների վրայ չի լինիլ, այլ իրենք եռանդով կըպահանջեն, որ իրենց դիւանագէտները զեկավարուեն հասարակական կարծիքի համեմատ»։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը Կովկասից ուղարկուող էքսպոնետների հաւաքման տեղը նշանակուած է Բաթումը, ուր այդ էքսպոնատներ կընդունուեն մաքսատան մէջ։

— Եաղուջայի լեռների (Թիֆլիսի գաւառ) հիւսիս-արևմտեան հովտում, Թիֆլիս-Կարսի երկաթուղու երկարութեամբ, մօտ երկու վերստ տարածութեան վրայ մորեխ է երևացել, որն արդէն թռհաւորուելու վրայ է։ Այդ մորեխը ջնջելու համար Թիֆլիսի գաւառապետը մարդիկ է պահանջել Կողայի, Կումիսի և Թելէթի գիւղական հասարակութիւններից, որոնց արտերին վտանգ է սպառնում։ Ներկայումս այդ գիւղերից հարիւրից աւելի մարդ զբաղուած է մորեխը ջնջելով։

— Կովկասի ռուս գաղթականութեան գործի կառավարիչ նշանակուած է Նեբքին գործերի մինիստրութեան գաղթականական մասի վարչութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Դ. Գ. Ռոզալիօն-Սոչայսկի։ Գաղթականութեան վերաբերեալ բոլոր խնդիրները կըվճռուեն Կովկասի կառավարչապետի դիւանի և երկրագործութեան ու պետական կալուածների Կովկասի հաւատարմատարի համաձայնութեամբ։

— Անդրկովկասում աւազակներին հետամուտ լինելու և բռնելու համար Կովկասի կառավարչապետի հաստատած հրահանգներն արդէն ուղարկուած են պատշաճաւոր իշխանութիւններին իգործադրութիւն։

— Ռուս հանքային ինժեներների մէջ խնդիր է մշակւում մի առանձին ընկերութիւն կազմելու, որի նպատակը պիտի լինի ամեն կողմից ուսումնասիրելու ասիական Ռուսիայի այն տեղերը, ուր հանքեր են գտնուում։

—Պետերբուրգից Թիֆլիս եկող պոստալիոն մի կառքի մէջ Մոլեխի կայարանում մայիսի 7-ին նկատուած է, որ դրամի պայուսակներից մէկը կարուած է և մէջից գողացուած է 83 հատ արծաթ րուբլի։ Ցիշեալ կառքի մէջ եղել է 3 այդպիսի պայուսակ 3000 ր. դումարով։

Յետագայ տեղեկութիւններից երևում է, որ գողացողն եղել է Փասանաուր կայարանի ձիավար Սարգիս Խաչատրեան, որը և ձերբակալուած է։

—Ինչպէս յայտնի է, Հաագի խաղաղութեան կոնֆերենցիան ոչ մէկ կողմնակի խնդրագիր, բողոք, առաջարկութիւն չէ ընդունում և քննութեան չէ ենթարկում, մեծ տէրութիւնների միջև այդ մասին կայացած համաձայնութեան վրայ հիմնուած։ Բուլղարիայի Վառնա քաղաքի հայերի կողմից յանուն կոնֆերենցիայի նախագահի՝ Հասպ մի հեռագիր է ուղարկուել, որի պատճէնը մենք ստացել ենք։ Ի հարկէ այդ տեսակ դիմումները չեն ընդունուիլ։

— Միդնէյում հրատարակուող «Courrier Australien» լրագրի ասելով, Պարիզի 1900 թ. համաշխարհային ցուցահանդէսի մէջ ռուսական բաժնի ամենահետաքրքրական մասը լինելու են Ռուսիայի ծայրերին գտնուած երկրների բաժինները. դրանց թւում Կովկասինը նը եւ Անդրկովկասինը։

—Չաբաթ, մայիսի 8-ին երեկոյեան, տեղի ունեցաւ Սլիվինսկու 4-րդ և վերջին կոնցերտը։ Թէպէտև երկինքն ասես պատռուել էր և յորդ անձրև տեղում, բայց չնայած այդ հանգամանքին մեծ բազմութիւն հաւաքուել էր մի չաբաթուայ ընթացքում ամենքին սիրելի դարձած Սլիվինսկուն լսելու։

Կոնցերտի պրոգրամը հետաքրքրական էր և Սլիվինսկին այս անգամ էլ զմայլեցրեց ամենքին. իւր նուագումովը Շոպէնը, Մոցարտը, Մենտելզոնը և Շոպէնը ձայների աշխարհում ներկայացրեց մեզ այնպէս, ինչպէս կարող է միայն երևելի արտիստը։

Առանձնապէս գրաւիչ էր Հէնզելտի «Sioiseau j'étais» սիրուն կտորը, փառաւոր էր Ռուբէնշտայի «վայլսը», իսկ Լիստի «Rapsodie XII»ը գեղեցիկ արհեստի կատարեալ յաղթական տոնն էր։ Ինչպէս մի հանճարեղ զօրապետ զօրքը պատերազմի դաշտն է առաջնորդում արբունահեղ մարտի, այնպէս կարծես Սլիվինսկին ձայների աշխարհում, տոներին առաջնորդում էր զէպի նուրբ զգացումների—երգերի բարձր աշխարհը, և ամենում գեղեցիկ յաղթանակը։

Անտարակոյս Սլիվինսկին նշանաւոր տաղանդ է, նրա տեխնիկան կատարելութեան է հասած, իսկ այն հոգին որ նա ներշնչում է իւր նուագած կտորներին, այդ մի շնորհք է, որ Պարնասի աստուածներն ընտրեալներին են պարգևում։ Սլիվինսկին նուագում է պարզ և ամեն մի նոտը, նրա մատների տակից դուրս հնչող տոնը որոշ զգայմունք և որոշ միտք է պարունակում և ամբողջութիւնը նուրբ մտածուած և գեղեցիկ հոգւով ներշնչուած մտքերի ներդաշնակութիւն է։

Կոնցերտը վերջացաւ սրտաբուխ և պարզ ցոյցերով. բացի դափնեայ պսակից՝ օրիորդները գեղեցիկ վարդերով խոցոտեցին լեհացի երիտասարդ արտիստի համեստութիւնը, որ ամաչելով չէր գիտէր, թէ ինչպէս արտայայտէ իւր շնորհակալութիւնը, իսկ արհեստին հմուտ, Թիֆլիսին յայտնի երաժիշտները բուռն ծափահարութիւններով բաժանուեցան ճշմարիտ արտիստ Սլիվինսկուց։

Այս տողերի գրողը լսել է նոյնպէս լեհացի նշանաւոր չուլթակահար Վիենեօվսկուն, երբ նա կոնսերվատորիան նոր աւարտած՝ առաջին անգամ հասարակութեան առաջ դուրս եկաւ իւր արհեստը ցոյց տալու. լսել է և դաշնակահարների թագաւոր Տաւտիգին, որ երիտասարդ հասակում մեռաւ բոլոր արհեստագէտներին խորը ցաւ պատճառելով, և այժմս լսելով Սլիվինսկուն՝ կարող է, առանց մարգարէ լինելու, մարգարէանալ, որ Սլիվինսկին եւրոպական հռչակաւոր դաշնակահարներից մինն է ճանաչուելու չուտով։

ՊԱՐԶ ԺԱՄԱՆԱԿ

ՊՈՍՏՈՆ, 2 մայիսի. — Ըստ Ամերիկյան Ասոցիացիայի տեղեկությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներկայումս կա 800 000 մարդ, որոնք ունեն ավելի քան մեկ աշխատանք, այսինքն՝ ամեն տասներորդ մարդը։ Ամենից շատ այդպիսիք կան Նյու Յորքում, Չիկագոյում և Ֆիլադելֆիայում։ Նրանք ստիպված են լինում ավելի շատ աշխատել, քան կարող են։ Ամենից շատ ժամանակ են կորցնում ճանապարհների վրա։ Ամերիկայի մեծ քաղաքներում ամեն օր հազարավոր մարդիկ ստիպված են լինում ժամերով սպասել տրամվայների, մետրոպոլիտենների և ավտոբուսների։ Ամերիկացիները ասում են, որ ժամանակը փող է։ Ուրեմն ամերիկացիները ամեն օր կորցնում են հազարավոր դոլարներ։

ՀՐԱՇԱԼԻ ՄԱՐԴԻԿ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 մայիսի. — Ըստ Ասոցիացված Պրեսսի տեղեկությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներկայումս կա 800 000 մարդ, որոնք ունեն ավելի քան մեկ աշխատանք, այսինքն՝ ամեն տասներորդ մարդը։ Ամենից շատ այդպիսիք կան Նյու Յորքում, Չիկագոյում և Ֆիլադելֆիայում։ Նրանք ստիպված են լինում ավելի շատ աշխատել, քան կարող են։ Ամենից շատ ժամանակ են կորցնում ճանապարհների վրա։ Ամերիկայի մեծ քաղաքներում ամեն օր հազարավոր մարդիկ ստիպված են լինում ժամերով սպասել տրամվայների, մետրոպոլիտենների և ավտոբուսների։ Ամերիկացիները ասում են, որ ժամանակը փող է։ Ուրեմն ամերիկացիները ամեն օր կորցնում են հազարավոր դոլարներ։

ՀՐԱՇԱԼԻ ՄԱՐԴԻԿ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 մայիսի. — Ըստ Ասոցիացված Պրեսսի տեղեկությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներկայումս կա 800 000 մարդ, որոնք ունեն ավելի քան մեկ աշխատանք, այսինքն՝ ամեն տասներորդ մարդը։ Ամենից շատ այդպիսիք կան Նյու Յորքում, Չիկագոյում և Ֆիլադելֆիայում։ Նրանք ստիպված են լինում ավելի շատ աշխատել, քան կարող են։ Ամենից շատ ժամանակ են կորցնում ճանապարհների վրա։ Ամերիկայի մեծ քաղաքներում ամեն օր հազարավոր մարդիկ ստիպված են լինում ժամերով սպասել տրամվայների, մետրոպոլիտենների և ավտոբուսների։ Ամերիկացիները ասում են, որ ժամանակը փող է։ Ուրեմն ամերիկացիները ամեն օր կորցնում են հազարավոր դոլարներ։

ՀՐԱՇԱԼԻ ՄԱՐԴԻԿ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 մայիսի. — Ըստ Ասոցիացված Պրեսսի տեղեկությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներկայումս կա 800 000 մարդ, որոնք ունեն ավելի քան մեկ աշխատանք, այսինքն՝ ամեն տասներորդ մարդը։ Ամենից շատ այդպիսիք կան Նյու Յորքում, Չիկագոյում և Ֆիլադելֆիայում։ Նրանք ստիպված են լինում ավելի շատ աշխատել, քան կարող են։ Ամենից շատ ժամանակ են կորցնում ճանապարհների վրա։ Ամերիկայի մեծ քաղաքներում ամեն օր հազարավոր մարդիկ ստիպված են լինում ժամերով սպասել տրամվայների, մետրոպոլիտենների և ավտոբուսների։ Ամերիկացիները ասում են, որ ժամանակը փող է։ Ուրեմն ամերիկացիները ամեն օր կորցնում են հազարավոր դոլարներ։

ՀՐԱՇԱԼԻ ՄԱՐԴԻԿ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 մայիսի. — Ըստ Ասոցիացված Պրեսսի տեղեկությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ներկայումս կա 800 000 մարդ, որոնք ունեն ավելի քան մեկ աշխատանք, այսինքն՝ ամեն տասներորդ մարդը։ Ամենից շատ այդպիսիք կան Նյու Յորքում, Չիկագոյում և Ֆիլադելֆիայում։ Նրանք ստիպված են լինում ավելի շատ աշխատել, քան կարող են։ Ամենից շատ ժամանակ են կորցնում ճանապարհների վրա։ Ամերիկայի մեծ քաղաքներում ամեն օր հազարավոր մարդիկ ստիպված են լինում ժամերով սպասել տրամվայների, մետրոպոլիտենների և ավտոբուսների։ Ամերիկացիները ասում են, որ ժամանակը փող է։ Ուրեմն ամերիկացիները ամեն օր կորցնում են հազարավոր դոլարներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Հայաստանի դատավորները, որոնք ներկայումս գտնվում են Թիֆլիսում, ուղարկվել են Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Նոր Բայազետ, Կարս, Ախալքալաք, Ախալցխա, Ղազախ, Ելիզավետպոլ, Շամախի, Բաքու, Ղուբա, Նուխի, Ջարդարի, Ղարաբաղ, Ղարաղալ, Ղարաղալ, Ղարաղալ

կութիւն է յայտնում աջակցելու այն մեծ և ազնիւ գործի իրականացմանը, որի մեծահոգի ձեռնարկողութիւնը յանձն է առել Հերդ Մեծութիւնը. ուստի կոնֆերենցիան խնդրում է ընդունել իր խոնարհ և խորին շնորհակալութիւնը։—Դը-Բոֆոլ»։

ՀԱԱԳ. — Խաղաղութեան կոնֆերենցիայի առաջին նիստը, որ զուտ պաշտօնական բնաւորութիւն ունէր, տեւեց 25 րոպէ։ Մասնակցում էին բոլոր պատգամաւորները իրենց հետ ուղարկուած մասնագէտների հետ։ Ամբիօնի վրայ կար մի քանի թղթակից։ Պատգամաւորները բռնեցին իրենց տեղերն այբուբենական կարգով։ Ժամը 2-ին եկաւ Հոլլանդիայի արտաքին գործերի մինիստր Բոֆորը թագուհու կամերհերը բարձն Հայֆտ-վան-Վէյլսենի հետ։ Կոնֆերենցիայի անդամները սիւրտուկներով էին։ Բոֆորը նստեց նախագահի տեղը և կեդրոնացած լռութեան մէջ արտասանեց իր ճառը, որը վերջն ընդհանուր համակրանք յարոյց։ Բոֆորն այնուհետև առաջարկեց հեռագիր ուղարկել Ռուսաց Կայսրին, որն ամենքի կողմից ընդունուեց միաձայն, և նախագահ ընտրել ռուսաց դեսպանին։ Դեսպան Ստաալը անյապաղ նստեց նախագահի տեղը։ Բոֆորը նըստեց նրա աջ կողմը։ Ստաալի արտասանած ճառն ընդունուեց միահամուռ ջերմ հաւանութիւններով։ Այնուհետև Ստաալն առաջարկեց հետևեալ հեռագիրն ուղարկել Նիդերլանդի թագուհուն. «Կոնֆերենցիայի անդամները, առաջին անգամ հաւաքուելով Huisten Bosch գեղեցիկ ամրոցում, պատիւ ունին արկանելու առոտս ձերդ մեծութեան իրենց ամենալաւ բարեմաղթութիւնները, խնդրելով ընդունել ամենախորին անձնուիրութեան հաւաստիքները և շնորհակալութիւնն այն հիւրասիրութեան համար, որ ձերդ մեծութիւնն այսքան ողորմածաբար հաճեց ցոյց տալ իրենց։ Ստաալ, նախագահ»։ Ժողովն այդ առաջարկն ընդունեց ջերմ հաւանութեամբ։ Ստաալն այնուհետև առաջարկեց մինիստր Բոֆորին ընտրել պատուոյ նախագահ և Նիդերլանդի աւագ ներկայացուցիչ բարձն վան-Կարնեբեկին—փոխ նախագահ։ Այդ առաջարկը նոյնպէս ընդունուած է։ Այնուհետև, Ստաալի առաջարկութեամբ, նշանակուած են 9 քարտուղար, որոնք իսկոյն նստեցին նախագահի սեղանի մօտ։ Կոնֆերենցիայի հակաճառութիւնները գաղտնի պահելու համար Ստաալի արած առաջարկը նոյնպէս ընդունուած է։ Այնուհետև նախագահն առաջարկեց հետևեալ նիստը նշանակել չարաթ օր ժամը 11-ին, յանձնաժողով ընտրելու ծրագիրը մշակելու համար։ Այնուհետև նիստը փակուեց։

ՀԱԱԳ.— Թագաւորական պալատների ինտենդանտ բարձն Հայֆտ-վան-Վէյլսենը, որը ներկայ էր կոնֆերենցիային, թէև պատգամաւոր չէ, ուղարկուած էր թագուհու կողմից դիմաւորելու օտարերկրեայ պատգամաւորներին։ Հայֆտը կանգնած էր գլխաւոր սանդուխքի վրայ պատգամաւորներին ողջունելու նրանց ժամանման րոպէին։ Կոնֆերենցիան բացուեց ամենալաւ պայմաններում։ Խաղաղութեան զանազան ընկերութիւնների պատուիրակներ զանազան երկրներից չափունակում են գալ անընդհատ։ Արդէն մի քանի օր է, որ ամեն երեկոյ ժողովներ են տեղի ունենում, որոնց մէջ քննում է դինադադարի խնդիրը։ Հաւատի ամենայարգելի ժողովրդականն ազատ ժամտ է տուել օտարերկրեայ պատգամաւորներին։ Թէ որքան ժամանակ կըտևի կոնֆերենցիան,—ոչինչ չի կարելի ասել. այս մասին եղած բոլոր կարծիքները ոչ մի ամուր հիմք չունին։

ՀԱԱԳ.—Դեսպան Ստաալի ճառը հետևեալն է.

«Իմ առաջին պարտքս եմ համարում ամբողջ շնորհակալիքս յայտնելու Նիդերլանդի արտաքին գործերի մինիստրին այն ազնիւ խօսքերի համար, որ նա արտասանեց իմ Օգոստափառ Պետի հասցէին։ Նորին Մեծութիւնը խորապէս գիտի զգացուի այն բարձր զգացումներից, որոնցով համակուած էր պ. դը-Բոֆորը, նմանապէս և այն պատրաստակամութիւնից, որով այս բարձր ժողովը միացաւ նրա հետ։

«Եթէ կոնֆերենցիայի գումարման ձեռնարկութիւնը պատկանում է ռուսաց Կայսրին, նորին մեծութիւն Նիկոլայեանդիայի թագուհուն մենք պարտական ենք այն բանի համար, որ նա ժողովից մեզ իւր մայրաքաղաքում։ Մեր աշխատանքների աջողութեան համար բարի նախանշան է հանդիսանում այն հանգամանքը, որ մենք հաւաքուել ենք նորատի թագուհու հովանու տակ—մի թագուհու, որի հմայքը լայն տարածուել է իւր չուրջը և որի սիրտը, ամեն մի բարձր ու ազնիւ գործի մատչելի մի սիրտ, այնքան համակրանք է ցոյց տուել այն գործին որը բերել է մեզ այստեղ, Հապագ,—այս խաղաղ շրջանը, այս ժողովրդի գիրկը, որ այնպիսի նշանաւոր գործիչ է հանդիսանում համաշխարհային քաղաքականութեան մէջ։ Մեր աչքի առաջ տեսնում ենք մի զարմանալի օրինակ այն բանի, թէ ինչ կարող են գործել ազգերի բարօրութեան համար քաջութիւնը, հայրենասիրութիւնը և անկուն եռանդը։ Նիդերլանդի պատմական հողի վրայ քինուել են պետութիւնների քաղաքական կեանքի ամենամեծ գործերը։ Կարելի է ասել, այստեղ էր դրուած միջազգային իրաւագիտութեան որդանը։ Դարերի ընթացքում եւրոպական պետութիւնների միջև ամենագլխաւոր խորհրդակցութիւնները կատարուել են այստեղ։ Վերջապէս, այստեղ էր, որ ստորագրուեց այն նշանաւոր համաձայնութիւնը, որով կարգադրուած էր ժամանակաւորապէս զադարեցնել արիւնահեղ պատերազմները պետութիւնների միջև։ Այսպիսով, մենք կանգնած ենք պատմական աւանդութեան բուն հողի կեդրոնում։

«Ինձ մնում է շնորհակալութիւն յայտնել Նիդերլանդի արտաքին գործերի մինիստրին այն համելի—չափազանց համելի—խօսքերի համար, որոնցով նա խօսեց իմ մասին։ Վստահ եմ, որ, խօսելով այս վեհաժողովի բոլոր անդամների կողմից, ես կարող եմ հաւաստիացնել նորին գերազանցութեանը, պ. դը Բոֆորին, որ մենք բաղդաւոր կըլինէինք, եթէ նա նախագահէը մեր նիստերին։ Որ մեր մէջ գլխաւոր տեղը նրան է պատկանում, այդ բանը ցոյց է տալիս ոչ թէ միայն ուրիշ այսպիսի դէպքերի օրինակը, այլ և բարձր յատկութիւնները պետական այն գործչի, որը ներկայումս ղեկավարում է Նիդերլանդի արտաքին քաղաքականութիւնը։ Նրա նախագահութիւնը, բացի դրանից, նոր արտայայտութիւն կըլինէը այն յարգանքի, որ մենք կըցանկանայինք ցոյց տալ օգոստափառ թագուհուն, որը ողորմածաբար հաճել է հիւրասիրութիւն առաջարկել մեզ։ Ինչ վերաբերում է ինձ, իմ ընտրութիւնը կարող եմ հեռանք համարել միայն այն հանգամանքի, որ ես Կայսրի, իմ Օգոստափառ Պետի, կոնֆերենցիայի գաղափարի Հեղինէյի լիազօրն եմ։ Այս մտքով ես ընդունում եմ խորին շնորհակալութեամբ այն պատիւը, որ տուին ինձ արտաքին գործերի մինիստրը՝ նախագահ առաջարկելով ինձ և կոնֆերենցիայի պ. պ. անդամները՝ հաճելով հաւանութիւն տալ այդ ընտրութեանը։ Բոլոր չանքերս պիտի գործ դնեմ նրանց վստահութիւնն արդարացնելու համար, բայց ես կատարելապէս հաշիւ եմ տալիս ինձ, որ իմ ծեր հասակը—աւա՜ղ—ախտը արտօնութիւն և թոյլ օգնական է հանդիսանում։ Ինձ ցոյս ունիմ, որ նոյն այս հասակ առիթ կըտայ ձեր ներողամտութեանը»։

ՀԱԱԳ.—Բոլոր գլխաւոր պատգամաւորներն առաւօտեան հաւաքուեցին բարձն Ստաալի մօտ և առանց դժուարութեան համաձայնութիւն կայացրին կազմելու երեք յանձնաժողով, որոնց պարծանքութեան չըջանը որոշուած է երեկ։ Առաջին յանձնաժողովը կըզբաղուի զինումները կրճատելու խնդրով, երկրորդը —պատերազմական օրէնքներ մշակելու խնդրով, երրորդը—միջազգային միջնորդ դատարանի խնդրով։ Յանձնաժողովների անդամներ նշանակում են գլխաւոր պատգամաւորները։ Հաւանաբար, երեքշաբթի կամ չորեքշաբթի յանձնաժողովները կը գումարուեն ընտրելու իրենց համար նախագահներ, փոխ-նախագահներ և վիկուցանողներ։ Յանձնաժողովները, հաւանաբար, հարկադրուած կըլինեն օգնական - յանձնաժողովներ նշանակելու։ Պատգամաւորները կարող են միաժամանակ պատկանել մի քանի յանձնաժողովների։ Կոնֆերենցիայում ներկայացուցիչ ունեցող իւրաքանչիւր ազգ ներկայացուցիչ կունենայ իւրաքանչիւր յանձնաժողովի մէջ։ Այս խնդիրները քննելիս ամեն կողմից կատարեալ համերաշխութիւն է ցոյց տրուած։ Վաղուայ նիստում Ստաալը, կոնֆերենցիայի նախագահը, կըլսայտնի այսօր վճռուածը և կառաջարկի ընդունել այսօրուայ որոշումները։ Վաղուանից մամուլի ներկայացուցիչներին թոյլ չի տրուիլ ներկայ լինելու նիստերին։ Հոգեբշաբթի օրը թագուհի Վիլհէլմինան և թագուհի մայրը կընդունեն կոնֆերենցիայի անդամներին։

ՀԱԱԳ, 9 մայիսի. — Կոնֆերենցիայի երկրորդ նիստը կայացաւ այսօր, առաւօտեան ժամը 11-ին։ Ստաալն առաջարկեց ընդունել երեկուայ որոշումները յանձնաժողովների վերաբերմամբ։ Կոնֆերենցիան ընդունեց այդ առաջարկը, ինչպէս և նախագահի այն առաջարկը, որ կոնֆերենցիայի աշխատանքների մասին տեղեկութիւնները մամուլին հաղորդուին կոնֆերենցիայի բիւրոյի միջոցով։ Յետագայ որոշումներն այն մասին, թէ ինչպէս պէտք է հաղորդուին այդ տեղեկութիւնները, կըկայանան յետոյ։ Հաւանական է, որ մամուլին հաղորդուելիք տեղեկութիւնները կըկազմուին արտաքին գործերի մինիստրութեան դիւանատան։ Նիստը վերջանալուց յետոյ, շատ պատգամաւորներ մնացին յանձնաժողովները կազմելու համար։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սագովայա փողոց, № 64)

(ա ե պ հ ա կ ա ն տ ո ւ ն)

Հեռախօս № 230

Երեքեակ հիւանդների ընդհանուր ընդունելութիւն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Հիւանդները ձրի են։ Ֆինեկոլոգիայի բաժանմունք ընդունուողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Ներկուն քից ազատուելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւն ըստ համաձայնութեան։ Երեքեակ բոլոր հիւանդները դեղերը և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Հիւանդները կարող են միաժամայն պատկանել մի քանի յանձնաժողովների։ Կոնֆերենցիայում ներկայացուցիչ ունեցող իւրաքանչիւր ազգ ներկայացուցիչ կունենայ իւրաքանչիւր յանձնաժողովի մէջ։ Այս խնդիրները քննելիս ամեն կողմից կատարեալ համերաշխութիւն է ցոյց տրուած։ Վաղուայ նիստում Ստաալը, կոնֆերենցիայի նախագահը, կըլսայտնի այսօր վճռուածը և կառաջարկի ընդունել այսօրուայ որոշումները։ Վաղուանից մամուլի ներկայացուցիչներին թոյլ չի տրուիլ ներկայ լինելու նիստերին։ Հոգեբշաբթի օրը թագուհի Վիլհէլմինան և թագուհի մայրը կընդունեն կոնֆերենցիայի անդամներին։

ՀԱԱԳ, 9 մայիսի. — Կոնֆերենցիայի երկրորդ նիստը կայացաւ այսօր, առաւօտեան ժամը 11-ին։ Ստաալն առաջարկեց ընդունել երեկուայ որոշումները յանձնաժողովների վերաբերմամբ։ Կոնֆերենցիան ընդունեց այդ առաջարկը, ինչպէս և նախագահի այն առաջարկը, որ կոնֆերենցիայի աշխատանքների մասին տեղեկութիւնները մամուլին հաղորդուին կոնֆերենցիայի բիւրոյի միջոցով։ Յետագայ որոշումներն այն մասին, թէ ինչպէս պէտք է հաղորդուին այդ տեղեկութիւնները, կըկայանան յետոյ։ Հաւանական է, որ մամուլին հաղորդուելիք տեղեկութիւնները կըկազմուին արտաքին գործերի մինիստրութեան դիւանատան։ Նիստը վերջանալուց յետոյ, շատ պատգամաւորներ մնացին յանձնաժողովները կազմելու համար։

ՌԱՋՄԱՎԻՐԱԿԱՆ ՁԱՆԱՊԱՐՀ

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր. 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլէթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Դուշետում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 *Բազուից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ 38 ր. մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 20 ր., հասնում է Բաթում եր. 8 ժամին 52 ր.

Պոստային գնացքը № 3 *Բազուից Թիֆլիս* մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 5 ժ. 9 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 6 ժ. 10 ր., հասնում է Բաթում առ. 7 ժամին։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 30 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 8 ժ. 30 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* եր. 9 ժ. 15 ր., հասնում է Բազու օրուայ 1 ժամին։

Պոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 40 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 55 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 11 ժ. 20 ր., հասնում է Բազու առ. 5 ժ. 24 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ

ՓԱՐԱԶԱՅԻ

„ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԸ"

ԳԻՆՆ Է 2 Ր. 50 Կ.

Հարցնել «Կեդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում։

(71) 5—2.

(М) № 51967 18—16

(М) № 167911 (9—7)

HUILE D'OLIVE BESSÈDE

ՊՐՈՎՆՍԻ ԻՍԿՈՒԱՆ ԻՂԳ՝ BESSÈDE ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄԱՔՈՒԻՐ, ԱՌՈՂՋԱՐԱՐ ԵՒ ԲԱՐՁՐ ԱՆԲԻԾ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ.

Խնդրում ենք չընդունել այն չիշերը, որոնց եաւլիկները փչացած են կամ որոնք ստորագրութիւն չեն կրում։ Զգուշանալ կեղծածներից, չէի եաւլիկն ու ձևը նմանեցնողներից։

ՄԱՐՍԵՅԼԻ (Ֆրանսիա) ԻՍԿԱԿԱՆ BESSÈDE ԻՒՂԸ ՎԱՃԱՌՈՒՄ Է

(М.) 48433 ՇՄԵՆ ՏԵՂ 12—4

ՎԻՊԱԴԻՐ Պ. ՊԵՐԾ ՊՈՕՇԵՄՆՅԻ

Քաւատնամեայ զբաղման գործունէութիւնը յարգողները մըտադիր են մի ճաշով տատուկ վաստակաւոր հեղինակին ամսոյս 16-ին, կիրակի օրը,

ԹԻՖԼԻՍԻ ԸՄԲԸՌՑԻՆ ԿԱՖԻՄԲԻ ՇՇԳՈՒՄ

Մասնակցել ցանկացողները թող բարեհաճին կանխագոյն դիմել ակումբի անտես (Экономъ) Մխիթարեանին, ոչ ուշ, քան մայիսի 14-ը, Թիֆլիսի ժողովարանում, կամ Բօյարսկի նոմերներում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն իշխան Օրբելեանի։

ՁԱՇԸ ԿԸԼԻՆԻ ՁԻՇՏ 3 ԺԱՄԻՆ։ 5—1.

Дозв. цензурою Тифлисъ, 10-го Мая, 1899 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ домъ № 12.—Телефонъ № 387